անծառ, անդաչտ, անդեռ տեղ մը, այլ սա-
կայն զարմանալի ծովաքաղաքի մը խորՀ կը
հանդչի, անոր աղտաղտուկ ջրանցից ան-
դադար թիաբեկ տատանմունքը լսելով իր
տարագիր տապանին եղերքներէն։ Ագու-
լիս ոչ սակաւ ճարտար և ճարպիկ ծնդոց
խանձարուրք եղած է, և յառաջադէմ քան
զչատս 'ի գիւղորայից հարաւային Սիս-
նեաց, որք միով անուամբ Ղափան (Հա-
բանդ) և Ղափանցիք կոչին. այլ և յատուկ
յանուանէ յիշին Ագուլեցի վաճառականք
'ի զանազան քաղաքս Եւրոպիոյ և մանա-
ւանդ Իտալիոյ. ուր և ոմանց հանգստեան
տապանք և տապանագիրք կան ճիան երա-
կու դարէ վեր. ինչպէս և հա՛ մնա 'ի Նա-
հապետ՝ 'ի բուն եկեղեցւոյն Հայոց հանդչի
Մարտիրոսի որդի Ագուլեցի Ոսկան մը
(1721). և տողերս գրողիս դիմաց մերձա-
ւոր կղզեկի մը մէջ, որ դարերով զգուշա-
բան (Լազարէթ) եղած է, որպէս ինձ, և
շատ մերազնեայց, կայ և կարգացուի ա-
նոնց մէկուն տապանագիրն ալ, հին քան
զնահապետին. «Այս է տապան Ագուլեցի
Նուրենց Մարտիրոսի որդի Նուրին. Թ.
ՌՃԻԳ»։ Ահա իբրև երկու հարիւր տարի է
(1678էն), որ պանդուխտն Նուրի Նուրենց
Ագուլեցի՝ զգուշապահութեան օրերը ան-
համբերութեամբ չլրացուցած՝ յանկարծ
կեանքը լրացուցեր և անցեր է յամենեւին
ազատ և անախտ վերնաքաղաքը. վաճառ-
ականք՝ ոչ գիտեմ որու թողով, իսկ մար-
մինը՝ ընդ բազմութեան նժգնչից և հիւ-
անդաց հօն հանգուցելոց՝ թողեր իսպառ
յամայութեան տեղւոջ, ուր արդ միայն
քանի մը գինուորականք պատեռազմական
մթերք կը պահպանեն։ Աչխարհիս քաղդն
որ շատ հեղ զմարդիկ ծայրէ 'ի ծայր կը
տեղափոխէ՝ երբեմն տեղեաց վիճակն ալ
այսպէս դէմ ընդ դէմ կը փոփոխէ։

Երկու ազգաւ կոուեցան 'ի մէջ փողո-
ցին, և մինն յաղթեաց զընկերն և ընկէց
զնա, հպարտացաւ և թռաւ և ելեալ բար-
ձրագոյն տեղիս և սկսաւ հեմել և գոչել և
բարձրաձայնել 'ի պարծանս յաղթութեան նո-
րա համարեալ զիւրն. և ահա զսպ արձիւ 'ի
վերուստ յանկարծակի, առեալ զնա և վե-
րանայ յօդս Ցուցանէ առակս թէ որ խըն-
դայ 'ի կորուստ թշնամւոյն իւրոյ կամ ու-
րախանայ հպարտութեամբ թէ յաղթեցի,
գայ 'ի վերայ նորա նեղութիւն և չար չար-
չարանք յանկարծակի, որ վայ տայ անձին
իւրոյ, և օրն ահագին և հուրն է բաժին
նորա. զի այսպէս ասէ Դաւիթ և Սողոմոն
թէ՝ Փորեցին առաջի իմ խորխորատ և ան-
կան ինքեանք 'ի նոյն։ Ոսկեբերդ.

digitised by A.R.A.R.@